

ԼՂԿԿ նախընտրական ծրագիրը

Հաղթե՛ն կոմունիստները՝ կշահի՛ Արցախը

Միրելի հայրենակիցներ: 2015 թ. մայիսի 3-ը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների օրը, բախտորոշ է լինելու մեր ժողովրդի ճակատագրի համար: Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը, որպես քաղաքական ուժ միշտ էլ գործել է ժողովրդի հետ և հանուն ժողովրդի:

Կոմունիստական կուսակցությունը միշտ հաշվի է առել մեր հասարակության կարծիքները, տրամադրություններն ու տեսակետները: Եվ բնական է, որ մեր կազմակերպական ու քաղաքական ամբողջ գործունեությունը նպատակաուղղված է լինելու այն խնդիրների լուծմանը, որոնք այսօր հուզում և անհանգստացնում են բազում դժվարություններ ու հոգսեր ունեցող մեր ժողովրդին: Առաջիկա հինգ տարիների ընթացքում մեր առաջնահերթ խնդիրն է լինելու ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը և այնպիսի պայմանների ստեղծումը, ուր մարդն օրենքով պաշտպանված կլինի, կունենա երաշխավորված աշխատատեղ, իսկ ստացած աշխատավարձը կբավարարի նրա սոցիալական հիմնական պահանջները և հնարավորություն կտա ապրել բարեկեցիկ կյանքով: Այս կարևոր խնդրի իրականացմանն է ուղղված այն նախընտրական ծրագիրը, ուր ներկայացվում են Լեռնային Ղարաբաղը (Արցախը) տնտեսապես անվտանգ երկիր, ինքնիշխան ու ժողովրդավարական պետություն դարձնելու մեր հիմնական մոտեցումները: Մեր համոզմամբ, անհրաժեշտ է հրաժարվել ամենատարբեր խնդիրների իրավիճակային լուծումներից՝ դրանք փոխարինելով ռազմավարական ծրագրերով՝ օրենքների տեսքով և դրանցից բխող հիմնարար որոշումներով ու լուծումներով: Օրենքները ոչ թե պետք է մնան թղթի վրա, այլ գործեն կյանքում և դառնան ժողովրդին հուզող խնդիրների լուծման իրական մեխանիզմներ: Մենք կարևորում ենք նաև պետության ու հասարակության հետադարձ կապի ապահովումը: Պետությունը պարտավոր է հաշվետու լինել հասարակությանը՝ տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականության համար և կազմակերպել ազգային նշանակություն ունեցող խնդիրների հանրային քննարկումներ:

Որպես միջազգային հանրության կողմից դեռևս չճանաչված և բազում դժվարություններ ունեցող երկիր՝ մենք պարտավոր ենք չկորցնել փխրուն խաղաղության շատ թանկ ժամանակը և գործադրել մեր ունեցած բոլոր հնարավորությունները՝ հիմնական սկզբունք և գործելակերպ դարձնելու հզոր ու պաշտպանված երկրի կառուցումը, իրավունքի և օրինականության ապահովումը, սոցիալական արդարության պաշտպանության և սեփական ապագան ու ճակատագիրը կերտելու ազգանպաստ մեր առաքելությունը: Այդ դեպքում միայն ի վիճակի կլինենք անկախ, ինքնիշխան ու բարգավաճ երկիր կառուցելը դարձնել համազգային գաղափարախոսություն և նպատակ, որի վերջնական արդյունքը կլինի բարեկեցիկ և իրապես ժողովրդավարական Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, կոմունիստական կուսակցությունը, հավատարիմ իր կառուցողական դիրքորոշմանը և իր ամենօրյա ազգանպաստ գործունեությամբ երկրի առջև ծառայած խնդիրները լուծելու սկզբունքին, իր նախընտրական ծրագրի յուրաքանչյուր բաժնում նշելով առկա հիմնախնդիրները, կարևորվելով պետական քաղաքականության գերակայությունները, առաջարկում է կոնկրետ մոտեցումներ, հին խնդիրներին տալով նոր լուծումներ: Մենք համոզված ենք, որ ներկայացված նախընտրական ծրագրի կենսագործունեությունը կնպաստի երկրում իսկական ժողովրդապետության հաստատման ամրապնդմանը, արցախահայությանը հուզող բազմաբնույթ հիմնախնդիրների լուծմանը:

Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունը ներկայացնելով իր նախընտրական ծրագիրը, այն իրագործելու ճանապարհին պատրաստ է համագործակցել Արցախի յուրաքանչյուր քաղաքացու հետ՝ նրան համարելով իր ամենահուսալի գործընկերն

ու խորհրդատուն, դրանով իսկ ժողովրդի հետ, ժողովրդի համար՝ գործելակերպը դարձնելով հիմնականը և գլխավորն առաջիկա տարիներին:

## 1. Ներքին քաղաքականության ոլորտում

- Կոմկուսը հետամուտ է լինելու ԼՂՀ Սահմանադրության սկզբունքներին համապատասխան ձևավորել պետական իշխանության գործուն համակարգ, ապահովելով օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունների իրական տարանջատումը, ներդաշնակ և հակակշիռ աշխատանքը:

- Կոմկուսը տարանջատում է աշխատավորների շահերը պաշտպանող իրական ժողովրդավարական պետությունը չինովնիկների, բուրժուակալվածատիրական և վաշխատուական շահագործող վերնախավի շահերը պաշտպանող բյուրոկրատական ապարատից:

- Ժողովրդավար երկրում մարդու իրավունքները, անհատի ազատությունը բարձրագույն արժեք են: Բազմակուսակցական ժողովրդավարության պայմաններում պետությունը պետք է երաշխավորի ԼՂՀ քաղաքացու անվտանգությունը, արժանապատվությունն ու ազատությունները, նպաստի անհատի կարողությունների լիակատար դրսևորմանը:

- Կոմկուսը իր ակտիվ մասնակցությամբ հետամուտ է լինելու, որ կայանա իրապես անկախ օրենսդիր իշխանություն, ծանրակշիռ քաղաքական մարմին և ոչ թե գործադիր իշխանության կցորդ:

- Կոմկուսը հետևողականորեն հանդես է գալու երկրում օրենքի գերակայության, օրենքի առջև բոլորի իրավահավասարություն հաստատելու, անպաժելիության և ամենաթողության մթնոլորտի վերացման, քաղաքացիների համար պետական ապարատի թափանցիկություն ապահովելու օգտին: Կոմկուսը ունի կաշառակերության ու կոռուպցիայի դեմ պայքարի հստակ ծրագիր, որտեղ գլխավոր շեշտը դրվում է օրենքի գերակայության, ինչպես նաև խստագույն պատժամիջոցների կիրառման վրա: Մենք անզիջում և հետևողականորեն պայքարելու ենք վերացնելու կաշառակերության և կոռուպցիայի սոցիալական և տնտեսական հիմքերը:

## 2. Արտաքին քաղաքականության ոլորտում

- Կոմկուսը գտնում է, որ արտաքին քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի Լեռնային Ղարաբաղի փաստացի անկախության միջազգային ճանաչումը, բարեպատեհ ժամանակներում մայր Հայաստանին մաս դառնալու հեռանկարով:

- Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, միայն քաղաքական բանակցությունների միջոցով, որոնց հիմքում պիտի դրվի ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Պետք է հասնել այն բանին, որ Ադրբեյջանը ետ կանգնի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման սկզբունքը Հայաստանի կողմից հողային պահանջատիրությամբ նենգափոխելու հայեցակարգից ու գործելակերպից: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին որևէ համաձայնագիր չի կարող ընդունվել առանց բանակցություններում դարաբաղյան կողմի մասնակցության:

Թուրքիայի և Ադրբեյջանի նկատմամբ պետք է դրսևորել արժանապատիվ, շատ զուսպ քաղաքականություն և բանակցային դաշտ մտնել միայն ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքը միջազգայնորեն ճանաչելուց, նրա կարգավիճակը ԼՂՀ ժողովրդի հետ վերջնականապես համաձայնեցնելուց հետո:

- Արտաքին քաղաքականության բնագավառում որդեգրել օրենքով հստակ պահանջատիրության սկզբունքներ՝ մեր ազատագրված տարածքների, բռնազավթված հողերի, կողոպտված ունեցվածքի ոտնահարման կապակցությամբ: Ձգտել, որ այն հիմնավորված լինի պատմական անառարկելի փաստերով, միջազգային իրավունքի և դատարանների վճիռներով:

- Նպաստել ԼՂՀ ինքնապաշտպանական համակարգի հզորացմանը, բնակչության անվտանգության ապահովմանը, տարածաշրջանում կայունության և տնական խաղաղության ամրապնդմանը, որի գլխավոր երաշխիքը ԼՂՀ Պաշտպանության բանակն է: Մենք բոլոր ջանքերը գործադրելու ենք բանակի հզորությունն ամրապնդելու, բանակում բարոյահոգեբանական մթնոլորտը բարելավելու, ժողովրդի մեջ բանակի նկատմամբ առանձնահատուկ հոգածության և հպարտության զգացում դաստիարակելու համար:

- Առաջարկել և օրենսդրորեն ամրագրել երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական ռազմական պատրաստության համալիր ծրագիր:

- Հետևողականորեն հանդես գալ Ռուսաստանի հետ Հայաստանի ռազմաքաղաքական դաշինքի ամրապնդման և հետագա զարգացման, սոցիալ-տնտեսական համագործակցության և մշակութային կապերի լիարժեք վերականգնման ու ծավալման օգտին:

- Նախաձեռնել օրենսդրական բարեփոխումներ, որոնք կնպաստեն Սփյուռքի ակտիվ ներգրավմանը ԼՂՀ տնտեսական վերականգնման ու զարգացման փոխշահավետ գործընթացներում: Շարունակել աշխատանքը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ:

- Մշակել և քննարկման դնել ԼՂՀ և ՀՀ հետագա տնտեսական, ռազմաքաղաքական, կրթամշակութային ինտեգրացման գործուն մեխանիզմներն ապահովող օրինագծեր:

### 3. Տնտեսական քաղաքականության ոլորտում

Կուսակցությունը ձգտելու է, որ արմատապես փոխվի ԼՂՀ-ում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղվածությունը, ապահովելով սեփականության բոլոր ձևերի ներդաշնակ գոյակցությունը պետական սեփականության գերակայության պայմաններում:

- Մշակել և ընդունել օրենք ԼՂՀ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների արագ գործարկման և արդյունավետության ապահովման կարևոր երաշխիք համարելով դրանց վերածումը համատեղ ձեռնարկությունների, առաջին հերթին՝ Հայաստանի, Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների հետ:

- Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ անցկացնելու ԼՂՀ պետական սեփականության, ինչպես նաև սեփականաշնորհված ձեռնարկությունների և օբյեկտների գույքագրում, ստուգել սեփականաշնորհման բոլոր գործարքների համապատասխանությունը գործող օրենսդրությանը և հիմնական միջոցների իրական արժեքին:

- Առաջնային խնդիր ենք համարում վերականգնել պետական սեփականության բացառիկ իրավունքը ԼՂՀ-ի անվտանգության և կայուն զարգացման երաշխիք հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի համակարգերի, ժողովրդական տնտեսության հենքային մյուս ճյուղերի նկատմամբ: Դա հնարավորություն կտա կայունացնել և հետագայում նվազեցնել ժողովրդի կենսաապահովման բոլոր ծառայությունների գներն ու սակագները:

- Նախաձեռնել հարկային քաղաքականության արմատական վերափոխում, նվազեցնելով հարկերը հատկապես արտադրության առաջատար ճյուղերում, միաժամանակ՝ բարձրացնելով հարկերը բանկային, միջնորդային ծառայությունների և այլ ոլորտներում, որտեղ շահույթի նորման զգալիորեն բարձր է տնտեսության միջին ցուցանիշից:

- Օրենսդրական բարեփոխումների միջոցով աջակցել հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը: Օրենսդրությամբ ամրագրել, որ հողը համարվում է համաժողովրդական սեփականություն, անժամկետ տրվում է անհատական և կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններին՝ վարձակալական կամ ժառանգական իրավունքով, բացառապես գյուղատնտեսական մթերքներ արտադրելու համար: Օրենքով արգելել հողի

առք ու վաճառքը, ամրագրել սեփականության բոլոր ձևերի գուգահեռ գոյությունը, տնտեսության այս կամ այն ձևի ընտրությունը վերապահել գյուղացուն, պատասխանատվություն սահմանել տնտեսավարման ձևերի ընտրության հարցում կամավորության սկզբունքը խախտելու համար:

- Մշակել և իրականացնել միջոցառումների համալիր ծրագիր՝ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, լքված գյուղերի վերաբնակեցման, կամավորության սկզբունքով գյուղացիական տնտեսությունների վերամիավորման ու խոշորացման, նրանց տրվող վարկային տոկոսադրույքների նվազեցման, երկարատև վարկերի տրամադրման, ագրարային ոլորտի ապահովագրության համակարգի ներդրման համար: Արտոնյալ ֆինանսավարկային պայմաններ նախատեսել ազատագրված ու լքված գյուղերի գյուղացիական տնտեսությունների համար:

- Ընդլայնել և զարգացնել ԼՂՀ-ում մեքենատրակտորային պետական կայանների ցանցը և ստեղծել սպառողական կոոպերատիվ ընկերություններ: Հնարավոր այլ միջոցներ ձեռնարկել հանրապետության խամ ու խոպանի վերածված հողերը նորից շրջանառության մեջ առնելու համար:

- Օրենսդրական քայլեր ձեռնարկել պետական կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց անհարկի և կամային միջամտություններից գյուղացիական տնտեսությունների բավարար պաշտպանվածությունն ապահովելու համար, հացի արտադրությունը և վաճառքը պետական հսկողության տակ դնելու ուղղությամբ, չբացառելով նաև մասնավոր հացարտադրությունն ու վաճառքը:

- Մշակել օրենք ռազմավարական նշանակության հումքի և նյութերի, արտաքին առևտրում, թեթև ու սննդի արդյունաբերության բարձր եկամտաբեր ճյուղերում պետական մենաշնորհի մտցնելու մասին:

#### 4. Սոցիալական քաղաքականության ոլորտում

- Կոմկուսն իր խնդիրն է համարում սոցիալ-տնտեսական այնպիսի համակարգչային փոփոխությունների իրականացումը, որը բխեր ժողովրդի մեծամասնության շահերից, երկրում վերահաստատելու սոցիալական արդարության և հավասարության սկզբունքները:

- Իրավական հիմքեր ստեղծել վերականգնելու քաղաքացիների աշխատանքի և հանգստի իրավունքները, որպեսզի յուրաքանչյուր արցախցի իրեն զգա պետության լիիրավ քաղաքացի, և հնարավորինս կանխվի արտագաղթը: Պետությունը պետք է արդյունավետ միջոցներ իրականացնի իր քաղաքացիներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ, երաշխավորի նրանց կենսաապահովման պայմանների բավարարումը, ըստ արժանավույն գնահատի իր քաղաքացիների վաստակը հայրենիքի առջև:

- Հետևողականորեն նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, որոնք կապահովեն պետական հովանավորություն առողջապահության, մշակույթի, կրթության և սոցիալական այլ համակարգերի նկատմամբ: Ստեղծել բնակչության անվճար բուժսպասարկման պետական ցանց, երիտասարդության համար ապահովել անվճար պարտադիր միջնակարգ և բարձրագույն մասնագիտական կրթություն, ամեն կերպ աջակցել երիտասարդ տաղանդների բացահայտմանը: Երիտասարդությունն իր ապագան պետք է տեսնի Արցախում և վստահ լինի, որ իր մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները ի նպաստ կդրվեն մեր երկրի առաջընթացին: Խթանել սպորտի և զբոսաշրջության զարգացումը: Բարենպաստ պայմաններ ստեղծել ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացման համար:

- ԼՂՀ պետական բյուջեի հաստատման ժամանակ հետամուտ լինել կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության, սպորտի բնագավառներում աշխատողների, պետական ծառայողների, զինծառայողների աշխատավարձերի, ինչպես նաև կենսաթոշակների ու նպաստների ամենամյա բարձրացմանը:

- Մշակել և իրականացնել բնակչության կենսաթոշակային ապահովության բարեփոխման համալիր ծրագիր, վերացնել կենսաթոշակների նշանակման պետության որդեգրած խտրական քաղաքականությունը և այդ հիման վրա կենսաթոշակների չափը համապատասխանեցնել կենսաապահովման գամբյուղի պահանջներին: Օրենսդրական քայլեր ձեռնարկել Հայրենական մեծ պատերազմի, աշխատանքի վետերանների, Արցախի գոյամարտի ազատամարտիկների, կենսաթոշակառուների, հաշմանդամների, մոր ու մանկան, բազմազավակ ընտանիքներում նախկինում եղած արտոնությունների վերականգնման ուղղությամբ:

- Մշակել օրենքներ սննդամթերքների և առաջին անհրաժեշտության ապրանքների, դեղորայքի, էլեկտրաէներգիայի, գազի, կապի ու տրանսպորտի միջոցներից օգտվելու, ջրի ու կոմունալ ծառայությունների գների պետական կարգավորման մասին:

- ԼՂ կոմկուսը գտնում է, որ Արցախիսնայբանկում գտնվող բնակչության խնայողությունները ենթակա են ինդեքսավորման և վերադարձման, իսկ կորցրած ավանդները` փոխհատուցման:

- Նպաստել երկրում սահմանադրորեն ամրագրված սոցիալական պետություն հաստատելուն: Աղքատությունը սպառնում է ազգային անվտանգությանը, խոչընդոտում երկրի իրական ժողովրդավարությանը, վտանգում մեր ավանդական ընտանիքի կայունությանը, պարարտ հող ստեղծում մեր հոգեկերտվածքին անհարիր օտար բարքերի տարածմանը, պատճառ հանդիսանում արտագաղթի: Ուստի աղքատության հաղթահարումը, ընտանիքի, հատկապես` երիտասարդ ու զոհված ազատամարտիկների ընտանիքների պահպանությունը, ամրապնդումը, նրանց բարեկեցության բարձրացումը կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկն է:

- Նախաձեռնել աշխատանքային նոր օրենսգրքի ընդունումը, որով կկարգավորվեն գործատուի և վարձու աշխատողի աշխատանքային հարաբերությունները, հիմք ունենալով անհատի սոցիալական ապահովության երաշխիքները:

\* \* \*

Միբելի հայրենակիցներ: ԼՂՀ յուրաքանչյուր քաղաքացի պետք է վստահ լինի իր վաղվա օրվա նկատմամբ: Մենք գիտենք, որ պետության հեղինակությունը ժողովուրդը գնահատում է նրա արդարության, ազնվության ու պարկեշտության աստիճանով: Իշխանությունը պետք է արժանի լինի իր ժողովրդին: Ժողովրդի հիասթափությունը իշխանությունից թուլացնում է պետությանը, դարձնում խոցելի, վտանգում ժողովրդի ձեռքբերումները, նվաճումներն ու հաղթանակները, որի համար ժողովուրդը վճարել է մեծ զոհերով ու զրկանքներով, անմոռուչ համբերությամբ: Կոմունիստական կուսակցությունը հետամուտ է լինելու իշխանության ամրոջ ուժը ծառայեցնել ժողովրդի արմատական շահերին, նրա բարեկեցության բարձրացմանը, իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Երկրի տիրոջ իրավունքը ժողովրդինն է, ժողովուրդն է իշխանության միակ աղբյուրը և Արցախի իրական տերը:

Ուրեմն քվեարկենք Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության օգտին:

Միբելի հայրենակիցներ:

Դուք ծանոթացաք Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության ծրագրին:

Մեզ բոլորիս հուզող հիմնախնդիրներն ու նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ է Ձեր վստահության քվեն, այնպիսի վստահության, որը թույլ կտա կոմունիստական կուսակցությանը ապագա խորհրդարանում ունենալ ծանրակշիռ ներկայություն:

Վստահեք մեզ մայիսի 3-ին, որպեսզի անհրաժեշտ ներկայություն ունենանք խորհրդարանում և առաջիկա հինգ տարիների ընթացքում կարողանանք արդարացնել Ձեր վստահությունը` հանուն Արցախի առաջընթացի և բարեկեցիկ կյանքի: Միաժամանակ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր 2010 թ. քվեարկեցին մեր օգտին, բոլոր նրանց, ովքեր նեղ ու դժվարին օրերին մնացին մեր կողքին, բոլոր նրանց,

ովքեր նոր են միացել մեզ, բոլոր նրանց, ովքեր կվստահեն և կքվեարկեն կոմունիստական կուսակցության օգտին:

Մեր կարգախոսն է՝

- Ժողովրդի հետ, ժողովրդի համար՝ աշխատանք և բարեկեցիկ կյանք:
- Արցախին՝ Անկախության միջազգային ճանաչում և իրական ժողովրդավարություն
- Հասարակությանը՝ օրենքի գերակայություն և սոցիալական արդարություն:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ